ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **26/մարտի/2025 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Վահագն Արսենյանը և Ժիրայր Բաբայանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Կարեն Գևորգյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ստեփանոս Վարդանյանը և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ավագանու անդամ Ազատ Հովակիմյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական՝ 2025 թվականի մարտի 26–ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու՝ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 81-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան

1.4.Ջերմուկ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է նտնում ստորագրման պահից:

Կողմ----12---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ՝ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ, 33-րդ հոդվածի 4-րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

1. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 10,128.0 հազար ՀՀ դրամով, որից՝

1) 4,694.0 հազար ՀՀ դրամն ուղղել «09-06-01-51-Մանկական Զարգացման Հիմնադրամ » գործառնական դասակարգման «4639- այլ ընթացիկ դրամաշնորհներ»

տնտեսագիտական հոդվածին՝Ջերմուկ համայնքում գործունեություն ծավալող «Մանկական Զարգացման Հիմնադրամ»-ին աջակցելու՝ պայմանագրային ստանձնած պարտավորություններից դուրս թվով 25 երեխաների խնամքի ծառայությունները կազմակերպելու համար,

2) 5,434.0 հազար ՀՀ դրամն ուղղել «08-01-01-51-սպորտային միջոցառումներ» գործառնական նշանակության «4639-այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածին՝ ս/թ փետրվարի 1-ից 7–ը Ջերմուկ քաղաքում «Ձմեռային համահայկական խաղեր-2025» համապետական միոցառման կազմակերպման նպատակով «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին պատվիրակված լրացուցիչ ծախսերը համաֆինանսավորելու համար:

2. Հաստատել Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի՝ սույն որոշմամբ կատարված փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------10---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------2----------

Ա. Հովսեփյան
Հ. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ն/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ)

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին և 34-րդ հոդվածին համապատասխան՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Ջերմուկ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին» N 81-Ա որոշման մեջ կատարել լրացում. որոշման մեջ ավելացնել 4.1-ին կետը հետևյալ բովանդակությամբ՝

«4.1. Սահմանել՝

ա) համայնքի 2025 թվականի բյուջեից մասնակցային բյուջետավորմամբ ձևավորվող ծրագրերի իրականացման գծով նախատեսվող ֆինանսական միջոցների ընդհանուր ծավալը 33,865.68 հազար ՀՀ դրամ (պետական բյուջեից մասնաբաժին 28,221.4 հազար ՀՀ դրամ, համայնքի կողմից՝ պետական բյուջեի մասնաբաժնի20 տոկոս՝ 5,644.28 հազար ՀՀ դրամ),

բ) յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը՝ 33,865.68 հազար (երեսուներեք միլիոն ութ հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ,

գ) առաջարկ-նախագծերի իրականացման համար անհրաժեշտ նախահաշվային գինը չպետք է գերազանցի մասնակցային բյուջետավորմամբ ձևավորվող ծրագրերի իրականացման գծով նախատեսվող պետական և համայնքային ֆինանսական միջոցների առավելագույն ընդհանուր ծավալը:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ----12---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով և 82.1-ին հոդվածով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----10---- Դեմ----1---- Ձեռնպահ----1----

Ա. Հովհաննիսյան Ա. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի ապրիլի 23-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ----12---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	բացակա
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ավագանու անդամ՝

ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____